«ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՐՐՈՐԴ ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒՄ»

ԿՈՆՖԵՐԱՆՍ ՍՏԱՄԲՈՒԼՈՒՄ

Մայն թվականի հունիսի 18-ից 25-ը Կոստանդնուպոլսի Հունաց Տիեզերական Պատրիարք Բարդուղիմեոս Երկրորդի օրհնությամբ Փրկչի մարդեղության երկհազարամյակի առիթով Թուրքիայի Ստամբուլ քաղաքում կազմակերպվել էր կոնֆերանս՝ «Երիտասարդությունը երրորդ հազարամյակի Ուղղափառ Եկեղեցում» խորագրով, որին հրավիրված էր մասնակցելու նաև Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին:

Վեհափառ Հայրապետի բարձր տնօրինությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից կոնֆերանսին մասնակցեցին Վիգեն սարկավագ Ղազարյանը, Սամվել սարկավագ Կիրակոսյանը և Օր. Գայանե Ալեքսանյանը (Միջեկեղեցական բաժնից): Կոնֆերանսին մասնակցում էին ներկայացուցիչներ աշխարհի գրեթե բոլոր կողմերից, քրիստոնեական Ուղղափառ Եկեղեցիներից, աստվածաբանական ֆակուլտետներից, հասարակական կազմակերպություններից, նաև՝ պապվիրակություն Կաթոլիկ Եկեղեցուց: Մասնակիցների թիվը շուրջ 600 էր, որոնց մեջ գերիշխող էին ազգությամբ հույները: Կոնֆերանսին մասնակցում էին նաև երեք ներկայացուցիչ Անթիլիասից՝ Տ. Մաշտոց վրդ. Չոբանյանի գլխավորությամբ, և մեկ կին՝ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքությունից:

Կոնֆերանսի բացմանը նախագահեց Բարդուղիմեոս Երկրորդ Հունաց Պատրիարքը: Ներկա էր նաև Կոստանդնուպոլսի հայոց Պատրիարք, Ամենապատիվ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆյանը, բազմաթիվ միտրոպոլիտներ ու հյուրեր:

Ժողովի քննարկման նյութ դարձան Ուղղափառ Եկեղեցուն հուզող խնդիրները.

1. Երիտասարդությունը, քարոզչությունը և վանականությունը.
2. Երիտասարդության մասնագիտացում, կրթություն, մասնագիտության ընտրություններ.
3. Լեզվի խնդիրը երիտասարդության մեջ այն երկրներում, որտեղ նրանք ապրում և գործում են: Ինչ կարևորություն ունի հունարեն լեզուն հույն սփյուռքի կյանքում.
4. Երկու սեռերի հարաբերությունները (սեր, ամուսնություն, սեռականություն).
5. Սպիդ, թմրանյութեր.
6. Էկոլոգիական խնդիրներ, երիտասարդության պարտավորությունները այս հարցում.
7. Երիտասարդության փորձառությունը՝ որպես Ուղղափառ սփյուռքի անդամներ:

Ընդունվեց կոնֆերանսի վերջնական բանաձև: Որոշվեց կոնֆերանսը դարձնել պարբերական և գումարել յուրաքանչյուր չորս տարին մեկ անգամ:

Կոնֆերանսը չափազանց օգտակար եղավ մասնակիցների համար, առավելաբար ճանաչողական առումով:

Գնահատելի էր նաև անմիջական շփումը օտարազգի երիտասարդության հետ, նրանց հետ մտքեր ու խոհեր փոխանակելը, նույն հարցերի շուրջ մտորելը:

ՍԱՄՎԵԼ ՍՐԿ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ